



ՎԱՐԱԴ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ

«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ
ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՀԱՄԵՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԱՅլ
ՈՃԱՓԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՓԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր հին գրականությունը հարուստ է խոսքի զանազան շրջաբանություններով, բայց նարեկացու «Մատեան» ողբերգութեանց-ը այդ կողմից յուրահատով դիրք է գրավում: Հին գրական երկերի մեջ խոսքի ոճաբանական շրջաբանությունները ընդհանուր բնույթուննեն, այսինքն չեն մշակված, չեն անհատականացված, այլ ուղղակի բնական խոսքը օժտված է դրանցով: Եթե կան նույնիսկ անհատականացման օրինակներ, դրանք գերազանցապես արված են հունարենի հոետորական օրենքների հիման վրա և գերազանցապես ընդօրինակումներ են:

Նարեկացին բնական խոսքի շրջաբանությունները մշակում և գործադրում է հատուկ նպատակով։ Նա շանում է իր խոսքը ազգեցիկ և խորիմաստ դարձնել, ազգել լսողի մտքի ու զգացումների վրա։ Ամեն ոճաբանական առանձնահատկություն այստեղ ունի որոշակի նպատակադրում։ Դրանք կամ փխառություն են մեր հին գրականության մյուս երկերից կամ Աստվածաշնչից, որի

ՏԵԶՈՒՆ ԵԿ ՈՅԸ*

աղղեցությունը ուժեղ է նրա վրա, կամ ուղղակի հենց Նարեկացու՝ անհատական ստեղծագործության արդյունքն են: Երա ստեղծագործած շրջաբանությունները քանակով ու որակով միանգամայն բարձր են ընդօրինակումների համեմատությամբ: Նա ստեղծում է թարմ շարուկթներ, հին բառերը օժտում է նոր նշանակություններով, հնտևում է բազմազանության ու պեսսպիսության սկզբունքին, հղանում է անսպասելի պատկերներ, հակադրություններ և այլն: Հենց այս նոր բառերի կամ քիչ գործածված բառերի կիրառումը խոսքն օժտում է նրբությամբ և վեճությամբ:

Մեր հոգվածաշարի այս մասում պետք է զբաղվենք նարեկացու ոճաբանական ինք-նուրուցն շրջաբանությունների քննությամբ, բայց մինչև դրանց անցնելը ուզում ենք մի քանի խոսք ասել այն մասին, թե ի՞նչպես է նարեկացին օգտագործել իրենից առաջ եղած գրականության ոճական միջոցները։ Այստեղ պետք է առանձնապես նշենք Աստվածաշնչի գերը, որի առաջին տողից սկսած մինչև վեր-շինը ծանոթ է նարեկացուն։ Նրա ամեն մի չըս համարյա հիշեցնում է Աստվածաշնչի բառապաշտան ու դարձվածները, նյութը, հա-սուեկ անունները, նրա մեջ հիշատակված դիպվածները և պատմությունները։ Նա չի բացատրում Աստվածաշնչի առասպելի կամ լեզենդի ծագումը, այլ որոշ ակնարկով հի-շում է և անցնում, ուստի մեծ մասամբ մեզ անծանոթ պատումները մնում են անհասկա-

ալի: Օդինակ՝ «Ահա արդարեւ երգս կատա-
երգութեան ջնարահար պոռնկի, յածեալ և
ոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս ողորմելիս և
կծեցուցիչս, ըստ առակաւար բանին նսա-
եայ, որ ի պատգամին Տիրոսի» (լթ):

«Նոգդված մասն անհասկանալի է, նյութի
անծանոթ լինելու պատճառով: Վերջին մա-
սում, այսինքն՝ «Ուր ի պատգամին Տիրոսի»,
այլը պակասում է և առաջանում է զեղչում
էլլիպս): Իսկ զեղչումը նպատակվոր է այն
ամանակի, երբ խոսքի նյութը ծանոթ է, երբ
ողմնակի գործողություններով հիշեցվում են
այց թողած անդամները, կամ պահվում են
Դարի մեջ, և երբ նրանք արտահայտում են
լգացումներ ու հույզեր, կամ խոսքն այնպիս-
ու դասավորվում, որ այդ զեղչված մասերը
Միշտ բացահայտում են: Իսկ այստեղ այդ
ուղոր հանգամանքները բացակայում են,
առուքը զրկվում է ընդհանրական արժեքից,
գառնալով միայն որոշ դասի սեփականու-
թյուն: Հետաքրքրականն այն է, որ մի
Մարդմանի վերսի նախադասությունը մեկ-
անել է այսպիս: «Ինչպես Եսային կըսի առա-
կով Տյուրոսի մասին դրած պատգամին
մեջ»: «Ուր ի պատգամին Տիրոսի» նշանա-
կում է՝ «որ Տյուրոսի պատգամի մեջ»,
այսինքն՝ «որ ասված է Տյուրոսի պատգամի
մեջ», կամ՝ «որ ասել է Եսային Տյուրոսի
պատգամի մեջ», քանի որ Եսայու մարդա-
րիության ժողովուր որոտեղից բերված է
այդ խոսքը, կոչվում է «Պատգամ Տիրոսի»
շեմ Աստվածաշունչ, տպ. Պոլիս, 1895):
Կամ՝ «իրրև զհաւ վայրենի սրացայ, ըստ
Ովսէեան բանին առ Եփրեմ, ի նախնին իմ
սովորութիւն»: Նախադասության կազմու-
թյունը անկանոն է, որովհետև մտածողու-
թյունը չի համապատասխանում ձեին: Ճիշտ
կլիներ, եթե այս նախադասությունը թարգ-
մանեինք՝ «իբրև մի վայրի թոշուն սրացա-
գեափի Եփրեմը» (կամ Եփրեմի մոտ): Բայց
այն ժամանակ օհ նախնին իմ սովորութիւն»
կապակցությունը կմնար նախադասությունից
գույս և կդառնար ավելորդ ու անհասկանա-
լի: Ինարկե այսպես չէ այս նախադասության
միտքը: «առ Եփրեմ» նշանակում է՝ «Եփրեմի
վերաբերյալ, Եփրեմի մասին», բայց, որ-
պեսզի վերջին կապակցությունը այդ իմաս-
տը ունենար, պետք է գործածվեր մի ասա-
ցական բայց: Այստեղ հարկավոր էր ասել
բայց. գոնե պետք է լիներ «ըստ Ովսէեան
բանին՝ ասացեալ առ Եփրեմ», բայց բա-
նաստեղը այդ ասացական բայր բաց է թո-
ղել, իսկ «առ Եփրեմ» կապակցությունը են-
թարկել է գոյականին՝ այսինքն բան գոյա-
կանը ընդունելով ի նախդիրը, միտամանակ
իբրև բայ առել է վերաբերության անուղղակի
խնդիր, որ ակնհայտ լեզվական թերություն

է և առաջացել է զեղչումից (էլիպսից): Սա-
կայն միտքը անհասկանալի է դեռևս, քանի
որ սրացայ բայը հեշտությամբ առ Եփրեմ
կապակցությունը գեպի իրեն է ձգում, որպես
մատուցման անուղղակի խնդիր: Այս զեղ-
չում գոնե պետք է արտահայտվեր որևէ հա-
րաբերական բառով: «Ըստ Ովսէեան բանին,
որ առ Եփրեմ»: Մի խոսքով՝ այստեղ միայն
պետք է զուշակենք նախադասության միտքը,
իմանանք, թե Աստվածաշնչում ո՞րտեղ և
ի՞նչ է ասված Եփրեմի վերաբերյալ, հակա-
ռակ զեղչում նախադասությունը մնում է
իբրև փակ գուռ:

Լեզվական այս տեսակ թերությունների
մասին առանձին խոսել ենք, այժմ տեսնենք,
թե ի՞նչ ընդհանուր արտահայտություններ,
պատկերներ է օգտագործել նարեկացին
Աստվածաշնչից և այլ երկերից, և ո՞րն է
ինքը ստեղծագործել:

Նարեկացին իր վերցրած նյութը որոշակի
ոճավորման է ենթարկում, դրանցով ստեղ-
ծում է նմանություններ ու պատկերներ և
շատ հաճախ խստացնում է նրանց արտա-
հայտությունը: Դրանք նյութ են ժառայուց
միայն բանաստեղծի համար, որպեսզի նա
ստեղծի փոխարերական արտահայտություն-
ներ, պատկերներ, համեմատություններ:
Շատ հաճախ նա աստվածաշնչական ամրող
շրջասությունները արտահայտում է մի բա-
ռով, որ ինքն է կազմում. օրինակ՝ Երեմիայի
մարգարեռության հետևյալ սովորական նկա-
րագրական արտահայտությունը. «Եւ զնացի
յափն Եփրատ գետոյ, փորեցի և առի զսիա-
ծանելին ի տեղուցէն, ուր թաղեցի զնա անդ-
և ահա ապականեալ էր սիմածանելին, և ահա
շէր ինչ իմիք պիտանացու (ժող 7): Նարե-
կացին մշակել է այսպես: «իրրև զհանդերձս
ինչ ապարահից (տպագիր՝ ապահարաից)
զաղրացայ. որպէս թթեալ աման ինցենէն
փշրեցայ անարծարելիքս: Համեմատիր, «Եւ
կործանումն նորա եղիցի իբրև զրեկումն խե-
ցեղին անօթոյ բրտի, մանր խորտակելոյ, զի
մի ոք գտանիցէ առնուլ սակաւ մի ջուրը
(Եսայի լ 14): Նախ փոփոխության են են-
թարկվել որոշ բառեր, շարութներ, օրինակ.
սփածանելի բառը, որ նշանակում է մեջքը
կապելու շոր, հին բառ է, առավել Աստվա-
ծաշնչի մեջ զործածված. նա փոխել է ընդ-
հանուր բառով, բայց և նկարագրական ձևով,
առանձին նախադասություններով արտա-
հայտված սփածանելի բառի հատկանիշները
բացահայտել է մի խիստ ու անպատշաճ
մակդիրով. «Իբրև զհանդերձս ինչ ապարա-
հից», Երկրորդ նախադասության միջ աստ-
վածաշնչական նմանությունը շատ ավելի
թուր է ու անհամապատասխան. կործանումը
չի կարելի նմանեցնել կոտրված անոթի հետ.

ֆիզիկական նմանության տեսակետից դրանք անհամատեղիլի են։ կործանումը կարող է նմանվել անկման հետ և ոչ անկման հետեւ վանքով առաջացած երեսութիւն հետ, այս պարզունակ նմանությունը նարեկացին փոխել է ավելի ճիշտ և որոշակի արտահայտված նմանությամբ։ «Որպէս թրծեալ աման խեցելէն փշուցայ անարծարծելի», որով ոչ միայն ստացվել է իրական պատկեր, այլև Աստվածաշնչի ողի։ «Մի՛ ո՛վ գտանիցէ ի նմանէ, որով ենու բառնայցէ կամ որով մարդիցէ առելով սակաւ մի ջուր», ամրող տասնհինգ բարփից բաղկացած շրջասությունը, որ միայն մի բառի արժեք ունի, նա արտահայտել է արծարծել բառով, որը նարեկացու ժամանակ արդեն ընդարձակ գործածություն ուներ՝ նորոգել և կամ բորբոքել (կրակը) նշանակություններով։

Վերցնենք ուրիշ օրինակներ։ «Զարտաքնայրար բաժակս անմաքուր, զրուեալ որմս գարշունակ, զսին պարծանօք պաճուծեալը, զլոյս ի մոայլ շրջեալ զգերանակիր ակնս թշուառացեալ, զջահս փառաց շիշեալ» (իէ)։ Համեմատի՛ր. «Վայ ձեզ դպրաց և փարիսեցոց կի սրբէք զարտաքնի զրաժակին և զսկաւոակին, և ի ներքոյ լի են յափշտակութեամբ և անխառնութեամբ» (Մատթ. իջ 25)։ «Հարկանելոց է զեեզ Աստուած, որմ բռնալ (Գործք իջ 3)։ «Քաննզի մեծարանս սնուածաց բարբառեալ» (Բ Պետր. Բ 13)։ «Իսկ արդ եթէ լոյսդ, որ ի քեզ է, խաւար է, խաւարն որչափ ևս» (Մատթ. Զ 23)։ «Թող հանից զջիդդ յականէ քումմէ և ահաւադիկ ի քում ականդ գերան կայ» (Մատթ. է 4)։

«Պակասեալ աւուրցս ի հեծութենէ, և ընթացք ամացս ի հառաջմանէ, ըստ նուագարանաց երգողին։ իրք ասուի ի ցեցոյ և փայտ ի յարդանէ, ըստ իմաստնոյն բանի ի խիբմանէ սրտիս հալեցայ, իրք զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իրք զամպ առաւօտեայ և զցող վաղորդայնի սպառեցայ (նարեկ իւլ)։ Համեմատիր. «Իրք ցեց հանդերձի և որդեն փայտի, նոյնպէս արտմութիւն վնասակար է սրտի առն» (Առակ ին 20)։ «Մաշեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա» (Սալմ. լը 12)։ «Վասն այնորիկ եղիցին իրք զամպ առաւօտու և իրք զցող վաղորդայնոյ որ անցանէ (Ովսէէ ժդ 3)։

«Մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ, և ոչ իւղողութեան, և գիշերոյն մոայլ աննշոյլ. ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տափնապ կոշողին փողոյ ստիպէ. զզարդ հարսանեացն կրկին մերկացայ, և զձէթ վարուցն վերստին լրի և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակի» (նարեկ կը)։ Չնայած շշումների պատ-

ճառով երբեմն որոշ մտքեր մեզ չեն հանում, առաջանում են առանձին բառերի անշատումներ ընդհանուր կառուցվածքի մեջ բայց փոխվելով ավանդական ձևերը, փոխվում է և հնչերանգությունը. բառերը ստանում են ուժեղ արտահայտություն, մտնուեն այնպիսի անսպասելի հարաբերությունների մեջ, կամ դրսեռում են այնպիսի կապեր, որ մենք երեք այդ բառերի նրատմամբ շէինք նկատել սովորական կիրառությունների և ոչ մի գեպքում։ Հենց այս պատճառով էլ այդ բառերը ձեռք են բերում իմաստային նրաւություններ, նոր և թարմ ձևերի մեջ խոսքն ստանում է առանձին նրաբերանգներ հուպարտահայտչական գոնավորումներ։ Համեմատի՛ր նաև հետևյալը երգ երգոցի հետ. «Ընդ Սողոմոնի օծելոյ որգեգրեցելոյ Աստոծոյ երգել բերանով հարսինն երկնարու փեարեան գոհարանութիւնն, համբուրեալ ի յիղծս մտաց զհոտ իւղոց քոց քան զամենայն խոնկս... զհետ քո ի հետ իւղոց քոց ընթացուք. լուացեալ զերեսս զուրբը կենաց, որ ի վեր է քան զերկին օդոյս այսուրիկ և օծեալ զգլուխ անխառական իւղով երկնայնով (Ղջ 11)։ «Ճի բարի են ստինք քո քան զգինի, և հոտ իւղոց քոց քան զամենայն խոնկս։ Եղան անոյշ հեղեալ է անուն բու, վասն այսորիկ օրիորդք սիրեցին զեեզ. և ձգեցին զեեզ. զհետ հոտոյ իւղոց քոց ընթացուք մեքը» (Երգ Ա 1-3)։ «Օծ զգլուխ քո և լուա զերեսս քո» (Մատթ. Զ 17)։

Այսպիսով համարձակորեն նարեկացին աստվածաշնչական մեկնական, բացատրական երկրորդական նախադասություններու ընդարձակված և ցրված նախադասությունները, որոնք ակնհայտորեն անմշակվածության և ժողովրդական դեռ չկազմակերպված, չամբողջացած խոսքի բնույթ են կրում, ձուլում է մի ամբողջության մեջ, մի բառով կամ մի համարձակ արտահայտությամբ։ Երբեմն փոխում է ոչ միայն սատվածնական խոսքի ձեզ, բառերը, նրանց կազմությունը, շարահյուսական կառուցվածքը, այլև փոխարերական պատկերի իմաստը, նոր նշանակություն տալով նրան։ Օրինակ՝ «Ղի՞ սրբէք զարտաքին զրաժակին և զսկաւոակին, և ի ներքոյ լի են յափշտակութեամբ»։ ամբողջ բարդ համարձակական նախադասությունը արտահայտել է մի կապակցությամբ. «Պարտաճակարգար բաժակս անմաքուր»։ ինչո՞վ են տարբերվում սրանք. նարեկացին խոսքի սեղմությունը հասցրել է վերջին կատարելության։ Աստվածաշնչի անորոշ ու խառը վերացական պատկերը թանձրացական է դարձրել։ Աստվածաշնչական պատկերի սկզբի մասում փոխարերական նմանությունը ճշմարիտ է. այս-

սքն՝ Փարիսեցիները և դպիրները իրենց բարքինը մաքրում են, Հակառակը պետք է մեր, իսկ ներքուատ լիքն են կեղտուույամբ: Իւայց նախադասության երկրորդ մասում վերանում է փոխարերական նմանույունը և թուզանում է հակագրությունը, քանի որ այդ մասում արդեն բաժակը չէ, որ անդես է գալիս, այլ մարդը: Որովհետև բաժակի մեջ չի կարող լինել «յափշտակուին» և անխառնութիւն»: Այսպիսով ստացում է վրացված համեմատություն և տրամաբանորեն սխալ հակագրություն, մանանդ որ անխառնութիւն բառն էլ այն իմասոր շունի հայերեն, որով այստեղ գործ է ածել, և նույնիսկ չի հիշեցնում դուզն շափով որեւէ բացասական նշանակություն, այլ նդահակառակն ավելի դրական շանակություն մինի (մաքրություն, գտություն). այդ բառը ազմված է հունարեն առօաւու բարի ճիշտ ևական թարգմանությունը տալու համար, որ նշանակում է անժուժկալություն, անզըսպություն, անշափավորություն, որտեղ և իստական ան մասնիկն է, իսկ հօքան: Իշանակում է խառնուրդ, խառնելը: Եվ այդ ամբողջ անորոշության դիմաց ունենք սեղմ, փոխարերական նմանության տեսակետից ճիշտ, իսկ հակագրությունը տրամերանորեն պատճառաբանված կապակցություն, որտեղ անաստեղծը ստեղծել է նաև հայերենի համար միանգամայն նոր բառ իսկական բարդությամբ (արտաքնայարդար):

Նարեկացին, օգտագործելով աստվածաշնչական լեզվական նյութը, այնպես չի վերարտապրում մեծ մասամբ, որպեսզի մենք այն առնենք շակերտների մեջ, կամ բացադրի դեպքերում նա դարձնում է անուղղակի խոսքեր այս կամ այն շաղկապներով, կամ փոխում է այս կամ այն ձեռվ՝ նոր բառեր ամելացնելով և հները դուրս գցելով: Օրինակ՝ «Ճիշ” ըդ իբր ոչ կուպաշտեալ անպատկառապէս պերճացաց ունայն պանծանօք ասել ընդ Գաւթի՝ «միքը մոռացեալ իցէ մեր զանուն Աստուծոյ, կամ ձգեալ զձեռս իմ մարթան օտար աստուծոց»: Ընդգծված նախադասությունները բերված են Սաղմոսի հետ գլխից, որտեղ գրված է այսպես: «Քէ մոռացեալ իցէ մեր զանուն Աստուծոյ մերոյ, կամ ձգեալ իցէ զձեռս մեր յաստուծուօտարու»: Կամ՝ «իբր յիմարս յարս և վատթարս ասել ժայռիմ թէ բերան իմ պատմեսցէ զիմաստութիւն, և սիրոս զհանճար» (Նարեկ 4): իսկ Սաղմոսի մեջ, «քէ բարան իցմաստութիւն և խորհուրդ սրտի իմոյ զհանճար» (ԽԲ 4): Առած նյութը լեզվական մշակման է ենթարկված: Միշանկցալ հիշենք, որ այդ անհամապատասխանությունները կարող են մասամբ առաջացած լինել նաև

նրանից, որ նարեկացու ձեռքի տակ գուցե եղել է Աստվածաշնչի հին թարգմանությունը, կամ հունարենը, քանի որ ժողովրդի՝ «ողոքումն դարձուցանէ զմեղս մեծամեծս», նարեկացու մոտ գոտնում ենք՝ «բժշկութիւն դարձուցանէ զմեղս մեծամեծս», որ համապատասխան է երայական բնագրին և հունարեն թարգմանությանը (Ժողովով Ժ 4, Նարեկ հի 4): Նարեկացու վրա Աստվածաշնչի ազգեցությունը ամենուրեք երևում է, բայց թէ՝ պատկերավորման և թէ՝ լեզվական կառուցվածքի ու մշակման կողմից նարեկացին իր ինքնուրույնությունը պահում է: Ինչպես ասվեց, հաճախակի անդրադառումը դեպի Աստվածարշունը նարեկացու թէ՝ լեզվական ու թէ՝ գեղարվեստական խոսքի հիմնական թերություններից մեկն է: այդ հաճախակի անդրադառումը գեղարվեստական երկը օժտում է ակնարկներով, ծածկում է առասպելա-միթական շղարշով: Ահա՝ մի օրինակ աստվածաշնչական առասպելաբանությունից, որ վերաբերում է ողջ Մերձավոր Արևելքի անցյալին, նրա մշակութիւն պատմությանը՝ «Քանդի կույտի առաջարկութեան խոնարհացին առաջարկությունը առաջարկությունը պատարացն Աստարաւայ և Քամուսայ և Մեղքովմայ արուարձանի և Թարահատայ թարմատարի, ընդ զարդուեացն կանացամիցն պատկառանք, անվերարի ծանակութիւնը» (Նարեկ Կ): Համեմատի՞ր. «Եւ գնաց Սողոմոն զհետ Աստարաւայ զարշելույ Սիդնացցոց և զհետ Մեղքովմայ զարշելույ որոցցն Ամոնայ» (Գ Թագ. ԺԱ 5—7): Կամ թե այնպիսի նմանություններ, ինչպես «Պատժակիցս կործանեցելոյն Սողոմոն, ըմբերանեալ զատակազս նինուէի, անարի բարբարոս քան զտիկինն հարաւային, վատթարագոյնս քան զիանան, յամառեցեալս քան զիմալեկ, անբժշկական քաղաք դրօշելոց, նշմար մնացեալ ապստամբութեան հինն իսրայէլի, յիշատակարան պահեալ ուխտազանցութեանն Յուլայ: Կըշտամբեալք գեր քան զնուր, տարամերժեալս քան զՄայզան, խորթաբարոյս քան զԳալիլիա, աններելիս քան զանհաւանն Կափանայում, պարսաւեցեալս իբր զՔորազին, բամբասեցեալս ընդ Բեթսայիթայ, անպահեշտ ծալկեցեալ ալիքս Եփրեմի» (Նարեկ Բ): Ցոլոր նմանություններն ու համեմատությունները մեզ համար մնում են անհասկանալի և իշեցնում են երկի գեղարվեստական արժեքը: Նույնիսկ եթե Աստվածաշնչի համապատասխան գլուխներն էլ կարդանք, դարձեալ դրանք մեզ համար մնալու են անհասկանալի, մինչև որ մեր ձեռքի տակ չունե-

նանք մասնագիտական աստվածաշնչական բառարաններ՝ հատուկ անունների ու միթաքանության:

Ինչպես այլ առիթով ասել ենք, նարեկացու վրա ազդեցություն են թողել նաև գրական այլ երկեր. մենք նկատի ունենք միայն լեզվական ազդեցությունը, այն է՝ որոշ պատկերների փոխառություններ, արտահայտությունների օգտագործում, շարահյուսական ձևերի ընտրություն և այլն։ Համեմատի՛ր, իրեւ օրինակ, հետեւյալ պատկերը Ազաթանգեղոսի նույնանման մի պատկերի հետ. «Եւ ընդ լալով սերմանել բանիս ի նախընթաց շուս աստիճանաց՝ օթևանացս պատրաստութեան ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոյն, դարձայց բերկրեցեալ լուսթեամբ քաւութեան պտղոյն երանութեան որայիցն բարութեան» (Նարեկ թ), այս հատվածը համեմատել ենք Սաղմոսի ձի՞ն զիսի նման մի արտահայտության հետ, բայց սա ավելի նման է Ազաթանգեղոսի «Այլ յորժամ որայն ի հոման եկեալ մատուցէ զատոքութեանն բերի զատուղ սերմանողացն՝ ընդ նմին և զցնծութիւն բերկրութեան ուրաքութեանց ամենայնի բերէ» (Ազաթ. 104) հատվածին, թէ՛ ըստ բովանդակության, թէ՛ շարութների ընտրության ու կառուցման. հնարավոր է նաև, որ Ազաթանգեղոսը օգտագործած լինի Սաղմոսի պատկերը: Ամենից ավելի ուժեղ է որոշ հատվածներում Խորենացու «Ողբ»-ի առկայությունը, որի մասին իսոսել ենք: Հիշշենք այստեղ նաև Եղիշեին, որի «Տիկնայք փափկասոմք» հատվածի շարահյուսական ձևերը իրենց համարական կապակցություններով, և շաղկապի յուրահատուկ գործածությամբ ու արտահայտչական զարգացած ձևերով այն հիմնական ատաղձն են, որի դասական օրինակով նարեկացին ստեղծեց շարահյուսական ձևերի բազմազանություն: Ահա մի օրինակ Եղիշեից. «Ու ոք ումեք ջուր ի ձեռս արկանէք, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին: Չեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն»: կամ՝ «կործանեցան բարձրագաճ տաճարք նոցա. և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա և տապալեալ աւերեցան ամուլք պատաստանի նոցա...»: Համեմատի՛ր. «Եափին յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն վայելլութիւն ստուբրացաւ. բոց գեհենին ինձ բորբոքցաւ...» (Նարեկ իդ):

Բանասիրության կողմից հաճախ հիշատակվել է Եփրեմ Ասորու «Գիրք աղօթից» երկի ազդեցությունը նարեկացու վրա, որ Եփրեմն էլ նարեկացու «Ողբերգութեան» հետ հրատարակվել է: Ահա՝ Եփրեմից մի հատ-

ված. «Ինձ լքելոյս ողորմեա, ինձ եղծելոյ օգնեա, ինձ խաւարելոյս ճառագայթեա, ինձ մոլորելոյս առաջնորդեա, որ լի եմ մեզօք և անթիւ յանցանօք. և ի յործանս անօրէնութեան տարրութեալ ծփիմ: Մի՛ դատեր և մի դատապարտեր զիս, Տէր, ըստ անրա զավիր գործոց իմոց. և մի՛ կացուացս զիս ընդ այլսն, որք զարացուցին զքեզ: Այլ ընդ փառարդեալն փառաւորեալ և ընդ պասկելոցն պահեալ և ընդ բերկրելոցն ուրախացու Փրկեա զիս, Տէր, ի գաղտնաձիգ նետից ստանայի, որ բոլոր մեթենայիւք պատեալ պաշարէ զիս: Աւար առեալ զմիոս իմ վարչ ի գերութիւն՝ ցանկութեան մեղաց առնելու ծաղը և այսն կատականաց թշնամեաց» (տե՛ս Գյուտ եպիսկոպոս «Արեւելյան Անպատականը և նարեկը», Երուսաղէմ, 1937 թ., էջ 134—135):

Այժմ անցնենք նարեկացու բանաստեղծական խոսքի միջոցների քննության: Ամենից առաջ պետք է նշել, որ նարեկացու լեզվի հիմնական շրջաբանություններից մեկը հակադրությունն է կամ անտիթեղը: Բանաստեղծը ստեղծում է սովորական երևոյթների հակադրություններ, որպեսզի զգացումներն ու մարդերը ավելի ցայտուն և բացահայտ դրսորվեն. ամբողջ «Մատեան ողբերգութեան»-ը հիմնված է Աստուծու և մարդու հակադրության սկզբունքի վրա. մի կողմը կանգնած է Աստված իր բարիքներով և փառքով, իսկ մի կողմում մարդը՝ մեղերով ու շարիքներով՝ դատապարտվելու արժանի հավիտենական անարգանքին: Ահա այս երկու հակադիր կերպարների հիմնավար, նարեկացին ստեղծում է լեզվական հակադրությունները: նարեկացին ամեն կերպ աշխատում է ազդել զգացումների վրա և գերել ընթերցողներին: իսկ զգացումները ավելի ցայտուն են դրսորվում երևոյթների հակադրությամբ. որքան հակադիր առարկաների մեջ հակադրությունը ուժեղ է, այնքան այդ առարկաները մեծ տպավորություն են գործում մեր մտքերի և զգացումների վրա: Նարեկացու ոճի հակադրությունները պայմանագործած են հեղինակի ներքին հակադիր առամազդրություններով ու ապրումներով: Ժամանակի իրականությունը բանաստեղծի հոգու մեջ ներկայանում էր բեկումներով: Հասարակական կյանքից գժգոհ, հավատի մեջ խորացած բանաստեղծը կասկածում էր ապագա թողության հույսի նկատմամբ. ճգնավորական խստակեցության զուգընթաց՝ նրա մեջ խոսում է բնական մարդը իր բարդ ապրումներով, կրթերով ու ցանկություններով: Ինչքան էլ նա ուզում է մտքով ու հոգով առաջինի մնալ, սակայն իրական բնախուսական մարդը միշտ գլուխ է բարձրացնուու-

ամեն անգամ հիշեցնում նրան իր ներկաւառությունը, որի դեմ հաճախ բանաստեղծը բառողքում է բայց որի հիբաններից չի պաղատվում: Այս հոգեբանական հակասությանը պատճառ էր դառնում հեղինակի կառածքը իրականության նկատմամբ: Նա խուսափեց զգում էր աշխատավոր մարդու նորագույն տական տառապանքը, բայց եթե չէր գտնում: Անարակական չարիքները, գժուի ությունը և մոդանուր կյանքից, անարարությունները, նրան դարձել էին մի մեծ տառապղություն՝ լի խոր հակասությամբ, մենակառ անօդինական: Այն հանկարծակի դիմումները Աստուծուն, ներումն հայցելը նրանից, հառաջացել են նրա Աստուծու ստեղծած կյանքի նկատմամբ ունեցած դժողովությունից: Ջեժուությունն ու կասկածը նրա գործած մահացու հանցանքներն են, եթե նա մի օր չի վկատացել Աստուծու և նրա օրենքների դեմ, ապա ի հնչի՝ են պետք այդ հոգեմրմունք ապացուքներն ու պաղատանքները: Աստվածաշնչական պատումների հանցավոր մարդկանց փոխարերական պատկերավորումները ըստ միջոցներ են, որպեսզի նա իր մտքերն ապարահայտի: Այնպիսի մի հանձարեղ մարդ, ինչպիսին Գրիգոր Նարեկացին էր, որ ամբողջ Աստվածաշունչը գրեթե անգիր դիտեր, չէր կարող չնկատել նրա միամիտ հերթափները, մնար իրար տրամաբանորեն հակասող ապաւուագելների ընդհանուր էությունը: Բայց նա այդ դպրացրանում չկարողացավ լրիվ կողմնուուցվել, չկարողացավ կասկածները զարգացնել ու հասցնել հասարակարգի բացասման, ընդհակառակը, նա զդաց իր հանցանքների համար, դատապարտեց իր մտավոր թոփշեր ները և սկսեց ներում հայցել: Նրան պակասում էր զիտությունը իր իսկական առումով: Նա անշուշտ ծանոթ կարող էր լինել հունական մի շարք փիլիսոփաների՝ տիեզերի և նրա մի շարք երկությունների մասին եղած ճշմարիտ բացատրություններին, բայց դրանք միայն կարող էին նրա մեջ կասկած առաջացնել և ոչ Հիմնական տեսակետ ստեղծել քրիստոնեական կրոնի ժխտման համար: Բանականության ուժը այնքան զորեղ չէր, որ կարողանար պատրանաթափ անել նրան:

Այնչեւ այժմ Նարեկացու բոլոր ուսումնասիրունքը պաշտամունքի բարձր աստիճանին հասած նրա ժողովրդականությունը բացատրել են նրա սրբանվեր ճգնավորի, մաքուր վանականի, բարեպաշտ բրիտոնյալի աստվածային վարքի պատճառով: Նարեկացու պաշտամունքն ու նրա ժողովրդականությունը Հիմնականում կապված են նրա բանաստեղծական խոսքի մեծ վարպետ լինելու հետ: Նա իր ժամանակ ժողովրդականությունը է վայելել, բանի որ եղել է տաղանդավոր

քնարերգակ բանաստեղծ, և ո՞վ կարող է ասել, որ նրա բանաստեղծությունները ժամանակին բերներերան չէին արտասանվել առանց գրի առնվելու, կամ եթե գրի են առնվել, հետագայում չեն ոշնչացվել «անպատշաճ» լինելու պատճառով. ո՞վ կարող է ասել, որ այսօրվա մեր շատ տաղերի, որոնց հեղինակները վիճելի են մինչև այժմ էլ, մի մասը որոշ փոփոխություններով նարեկացունը չեն եղել:

Նարեկացին, իրեք մարդ, իր բարդ փոփոխական ապրումներով, մտածողության հակասականությամբ կապված է իր դարաշրջանի հետ ու դեռ առեղծված է մեղ համար: Նրա հակասականությունը, հոգու բեկումները, տառապանքները ամենից լավ արտահայտվել են լեզվի ու ոճի մեջ: Այստեղ մենք գտնում ենք իրոք ապստամբող մարդու հակասական արամագրությունները, բարդ ապրումները՝ զարմանալիորեն բարդ ձեռքի մեջ: Իրականության հակասությունները արտահայտվում են խոսքի հակադիր ձեռքով, որոնք հասցված են արտահայտչական կատարելության: Օրինակ՝ «Եւ ի մերկութեանս զրկի՝ փուշ ընդ շուշանաց ժողովեցի» (4): Հոգեբանական բարդ ապրումները արտահայտված են իրական առարկաների հակադրությամբ: Շուշանի և փշի հակադրությունը ցնցող է լրիվությամբ և բացարձակ կատարելությամբ, քանի որ այս զեպքում իրար հետ հակադրվում են բազմաթիվ հատկանիշները: Շատ անգամ բանաստեղծները խավարը հակադրում են լուսին, նարեկացու մոտ նույնպես բազմից կրկնվում է այդ հակադրությունը, բայց չնայած լուսին ու խավարի հակադրականության, շի ստացվում այն, ինչ որ մեր բերած հակադրության մեջ կա: Այստեղ առաջանում են բազմաթիվ զացումներ, ընթացությունը, նրբությունը՝ կոշտ ու կոպտության գեմ: անսահման հաճույքն ու բոլոր մուր ժակողության գավի գեմ, սպիտակ, աշքերը պայծառացնող գույնը անգունության գեմ, բարությունը շարության գեմ և ալլն և ալլն: Եվ այս ամբողջը կապվում է մարդու զանազան զգացումների, մտքի, բազմազան տպավորությունների հետ: Այստեղ արդեն բավականաշատ ուժեղ կլիներ հակադրությունը մերկ գրի ու հավաքված փշի միջև, բայց և շուշանի հակադրությունը մտքերի ու զգացումների անսահման հեռանկարներ է բաց անում: Նարեկացու գրի բոլոր գույնների կառուցվածքը ճիմնված է հակադրության վրա: Սկզբում տրվում են Աստուծու բարեմասնությունները, ապա դրան հակադրվում են հեղինակի սեփական մեղերն ու հանցանքները, և հետո, այլ հակադրական շաղկապով նորից հիշելով Աստուծու առավելու-

թյունները, նա օգնություն է հայցում. «Այսմ զօրես առ ելիցն հնար. նայեա ի բնութեանս ամենապատաղ խակութին և պարզեա բժշկութին վիրացու»: Մեջնդմեջ առաջ բերելով փափոխակի հակադրություններ, երրորդ մասում արդ ընդհանրացնող շաղկապով եղրափակվում են նախորդ երկու հակադիր հատվածները. եթե այդպես է, ուրեմն դու պետք է որ զիթա և պետք է ընդունես իմ խոստովանությունները: «Արդ՝ տես ի քոյդ մեծութին, նայեցեալ ի յիմս փոքրութին, ընկալ զսակաւ խոստովանութիւնս անհամար մեղացու»: Մեծ մասամբ նկատելի է եռամասնյա կառուցվածք. սկզբում հաճախ տրվում է հիմնական թեման, այն է՝ խոսակցի արժանիքները. երկրորդ մասում այդ հատկությունները նա զարգացնում է շեշտակի հակադրություններով, իսկ երրորդ մասում տարբեր ձևերով կրկնում է առաջինը՝ ստեղծելով օղակային կառուցվածք:

Թերած հատվածը կազմված է խոսքի երկու ամբողջական եղբերից, որոնք որպէս և այսպէս մակրայներով նմանեցվում են, հավասարեցվում իրար, բայց խոսքի յուրաքանչյուր եղորում գոնվում են իրար հակադիր երեսությներ, որով ստացվում է իրենց մեջ իրար հակադիր տարբեր մասերի մի բարդ ամբողջություն: Գևական հակադրությունն գոյություն չունի. կա միայն իմաստային հակադրություն կամ բնական հակադրություն, որով միշտ մտքով մենք լուսը հակադրում ենք խավարին, ցավը՝ առողջությանը և այն:

Խսկական հակադրությունը այն է, երբ խոսքի տարբեր եղբերն են իրար հակադրվում, որպէսզի նկարագրվող երեսությները առավել ցայտում հանդես գան իրենց բոլոր կողմերով, նրանք յուններով, մանավանդ, երբ դա կազմվում է որևէ հակադրական բառով: Օրինակ՝ «Մի ընդհարկանիր խստութեամբ մեծությունը առ այս մեջ ստորականիս, բնութեամբ բարիդ՝ ընդ ի բնէ շարիս, ողկոյզդ օրհնութեան՝ ընդ պտղոյս անհծից, քաղցրութիւնդ խսկապէս՝ ընդ համայն դառնութեանս, փառաւորեալդ անփոփոխ՝ ընդ ամեննեին անարգիս, կենացդ նշխար՝ ընդ կաւոյս զանգուածոյ, Տէր տէրանց՝ ընդ տղմիս երկրայնոյ, աննուազ լիութիւնդ՝ ընդ յքաւոր ստրկիս, անկապուա ճոխութիւնդ՝ ընդ անպատսպար տառապելոյս, անկարօտ բարութիւնդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս (Ժէ): Աւստեղ հակադրությունը առավել արդյունավետ է շնորհիլ խոսքի համաշափ կառուցվածքի. բովանդակությամբ բոլորովին հակադիր արդյունքները հանդես են գալիս միւնույն ձևով, նախադասության անդամների համաշափ դասավորությամբ:

Համաշափ մասերի հակադրության լավագույն օրինակ կարող է ծառայել նաև հետևյալ կտորը. «Եւ աշա խառնեալ զանմաքուրս բանընդ նախագրեալ երշանկացն փառատրական աղերսարկութիմ, որ վասն իմ գոշեն քեզ է հաճութին, և ես ընդ նոսին իրը դառնութիւն եղեալ ընդ քաղցու կամ տատասկի ընդ ողորկութեան, տփեղութիւն ընդ վայելցութեան, և տիղմ ընդ գեղեցկութեան մարգարոտի, կամ հող ընդ յստակութեան ուկոյյ, և կամ քարինս անարգ ընդ պայծառութեան արծաթյու բացասութիւն ընդ ճշմարտութեան, կամ աւազ ինչ ատամնառու ընդ կաղութեան զանգուածոյ հացիս (ԶԲ):

Հակադրության ամենամաքուր ձեզ հակադիր կրկնությունն է, որն ուղեկցվում է համաշափությամբ. երկու հակադիր նախադասությունները միմյանց հաստատում են. «Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ, և այր անօրէն կործանէ»: Այսպիսի ետապարձ կրկնությամբ հարուատ են Սողոմոնի առակները. «Եմաստուն թոփ անձին իրում այր մեծատուն, և աղքատն հանձարեղ ստգատանէ զնա: Այր անզգամ փորէ զահակառակութիւն, և այր հեզ դադարեցոյց զմեղս»:

Հակադրության այս ձեզ ավելի թույլ է, որովհետև կրում է առածային խոսքի բնույթը և զորկ է ներքին հայցից ու թափից. հակադրությունը հանկարծակիություն և անսպասելիություն չի առաջացնում, քանի որ, երբ ասվում է՝ «Լաւ է աղքատ, որ գնայ ճշմարտութեամբ», հաջորդ նախադասությունը առդեն մաքում կազմվում է, այլև նրա կարիքը չի զացվում: Նարեկացու քնարական զեղումներով առցուն ունին այդպիսի սառը առածային հակադրությունները, որոնք ունեն չոր, մակագրական բնույթ, չին կարող հարմարվել: Նարեկացին փնտում է խոսքի սուր հակադրություններ, որոնք անսպասելի և հանկարծակի լինեն, որովհետև զգացումների հակասականությունը հնարավոր է միայն խոսքի այլ տիպի հակադրությամբ արտահայտել, այսինքն հակադրությունը ստեղծվում է ոչ թե տարբեր առարկաների ու երեսությների միջև, այլ հակադրության միեւնույն անձի տարբեր վիճակների միջև և այդ ամբողջը համարյա միաժամանակ է հանդես դալիս: Ստեղծվում է մի տեսակ օքյումորոն, որտեղ հակադիր հատկանիշները հայտնվում են միւնույն անձի կամ երեսութիւն միջև: «Որ մինչդեռ արթունս եմ, նիրհեմ. մինչդեռ զգաստ երկիմ, թմբրիմ. ի խաղաղանալս իմում, ամբոխիմ. մինչդեռ արշաւեմս, առ ի յետույն հակամիտեմ, ծաղկիմ, և ոչ պաղաբերիմ. ասեմ, և ոչ առնեմ, մտանեմ ի բոյն աղանի, և անտուստ ադուալ ելանեմ. զամ սակաւ մի սպիտակ, և սրանամ դառնամ:

նաւին սեացեալ. ի յոտս հաստատիմ, և ի իտս տատանիմ. դասիմ ի պարս հեղոց, և նդ այսս կաբաւմ: Այսօր մաքուր հոգեկիր, վաղին մոլի խելազար. ի յելս արեւոն հաստատ երեմ, և ընդ երեկս ունայն դեգե- տիմ...» (ՀԱ):

Ահա բանաստեղծի ապրած իրական կյան- չի հակասությունը լեզվական ինչ ձևերով է արտահայտվում. բավական է միայն հենց այս կտորը, որպեսզի ապացուցի մեր ասա- քը, թե միջնադարի մեր բանաստեղծը կաս- ցածում էր այն բոլորի համար, որին նա իր կյանքն էր զոհում բոլորանվեր: Նրա բարդ ապրումներն ու հոգեկան հակասությունները, որոնք առաջանում էին նրա ապրած դա- տաշրջանի հասարակական հարաբերություն- ների հետեանքով, և որ ամենից խոր անդրա- դպանում էին նրա անհատական հոգում, առաջ էին բերում ոճի այն բազմազանությու- նը, որ մենք նկատում ենք: Ամեն քայլափո- խում նա փնտում է ոճական արտահայտ- չական նոր միջոցներ, որպեսզի կարողանա- ցայտուն կերպով արտահայտել հոգեկան բազմապիսի ապրումները, ամեն մի ոճա- կան հնարի մեջ նա հանդես է բերում իր ան- հատականությունը՝ բոլոր տարբերիչ գծե- րով:

Ինչպես որ նրա ոճը հարուստ է հակա- դրություններով, այնպես էլ հարուստ է փո- խարերություններով ու համեմատություննե- րով: Գեղարվեստական խոսքի այս միջոցնե- րը նարեկացին օգսագործել է ամենալայն շափերով: Հայոց էին գրականությունը չի ունեցել գեղարվեստական երկեր, որպեսզի նրանց միջոցով մշակվեին գեղարվեստական խոսքի բազմազան ձեռքը: Նարեկացու առջեն էր միայն Աստվածաշունչը իր պարզունակ ոճական միջոցներով և մեր պատմական ու կրոնական գրականական երկերը, որոնց մեջ մշակված չէին ոճական այնպիսի արտահայ- տություններ ու ձեռք, որ բնարական խորու- թյամբ զրակորեին հոգեկան բարդ ապրում- ներ, որոնք անհատական լինելով հանդերձ, գոռնային համամարդկային: Ալդ բարդ հո- գեկան փլվածքների համար հարկավոր էր ստեղծել հատուկ ոճական միջոցներ, մշակել այդ միջոցները այնպիսի վարպետությամբ, որ նրանք իրականության երեսովները ար- տահայտեին իրենց բոլոր նրբություններով, թանձրությամբ և միաժամանակ լինեին հու- զիքի: Նարեկացու ապրած իրականությունը նրան դարձրել է նյարդային, տատանվող, կասկածոտ, նրա մեջ գոյություն չումի հա- վասարակշռված զգացում. հաճախ այդ զգա-

ցումները հասնում են գերագրգովածության սահմաններին և երբեմն բոլորովին մարում են. երբեմն նա ապրում է բարդ մղձավանչ, գորս է գալիս բնական մարդու սահմաննե- րից, տարվում է երազական տեսիլներով, մտալիումներով և ապա հանգստանում է, աղատվում է այդ տեսլական ցնորդներից և այս բոլոր բեկրելումները նա արտահայ- տում է տարբեր լեզվական ու ոճական մի- ջոցներով:

Զարմանալին այն է, որ այս մարդը նյութի այդ ամբողջ վերացականությունը արտահայ- տում է իրական պատկերներով: Հոգեկան ամենաբարդ երեսովները նա խտացնում է իրական առարկաներով. օրինակ՝ իր փոթո- րիկներով լի կյանքը պատկերավոր զուգա- հեռի միջոցով նմանեցնում է ծովին, որը լի է ծփանքներով, իսկ իր անկումը համեմա- տում է նավարեկման հետ: Բանաստեղծա- կան այսպիսի պատկեր աննախընթաց է մեր գրականության մեջ: Միայն հետո Սայաթ- Նովան է օգտագործել այդպիսի մի պատկեր, «Աշխարը ծով գու մեջը նավ, ման իս զալիս լանգ իս անում»: Պատկերավորման շափա- զանցության արվեստը, փոխարերական նրբությունները իրենց արտահայտությամբ ստեղծում են տպավորությունների բազմա- թիվ շարքեր. «Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն, յո- րում կոհակօք բազմօք անթիւ դիմեցման տատանեալ հոգիս ի յայսմ աշխարհի մարմ- նոյս շինուածով իբր ի նաւակի... որ և առ իմս հոգեռորական խորտակումն զուգաձայնել ոչ է սխալական: Քանզի մինչդեռ շունէի յանհոգութեան անտարակոյսն վստահու- թեամբ, որյուն կասկած արկածից ի միտ բե- րելով՝ առ խտրոց փոքր միջոցին, որ ի մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն յամարայնի բբարեր հող- մով ժամանեալ երեքալեանն դիմակու- թեամբ՝ ամբոխեաց զհանդարտութիւնն: Ուս- տի նաև ի բախմանէ վայրենի ալեացն խոր- տակեցաւ. Թեոցն ձեռնարկութիւն քայլայե- ցաւ, կայմն ամբարձման ի կայից իւրոց խլե- ցաւ, առազատին թոշնարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ...»: Շարունակության մեջ նա թվարկում է նաևի բոլոր մասերի անունները ամենայն մանրամասնությամբ, որոնք անշուշտ մտրով նմանեցնում է մար- դու մարմնի այս կամ այն մասի հետ. այդ անուններից մի քանիսը նարեկացին միայն ինքն է գործածել, որոնք նարեկացու միջո- ցով մտել են մեր լեզվի մեջ:

(Շարունակելի)